ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ №29-Լ

«11» 04 2023 թ. ք. Երևան

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Անահիտ Մանասյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ 2023 թվականի ապրիլի 10-ի N 151-Ա հրամանը, ելնելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի և նրա տեղակալների միջև աշխատանքի հավասարաչափ բաժանում և ծանրաբեռնվածություն ապահովելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի նոյեմբերի 3-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգում արձակուրդի և գործուղման հրամանների, ինչպես նաև ծառայողական վկայականների ստորագրման լիազորությունների նոր բաշխում կատարելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2016 թվականի հուլիսի 4-ի N 53, N 54, N 55 հրամաններն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 99 հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի պարտականությունների կատարումը

դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Գևորգ Բաղդասարյանի վրա:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2023 թվականի ապրիլի 12-ին:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ